տեսանք, որ այդ կարգի բնութագրումները ծառայում են իբրև վկայաբանությունների վերնագրերի կաղապարային տարրեր: Այսինքն՝ վերնագիրը վերածվում է սկսվածքի: Այնուհետև հաջորդում են հակիրճ վարքն ու դիմանկարը, բայց էլ ավելի հակիրճ ու կարճառոտ: Բովանդակային կաղապարներն առանց բացառության առկա են. Գրիգորին մեղադրում են մահմեդականի սպանության մեջ, ապա տանում դատարան, որտեղ նրան մեղավոր ճանաչելով՝ դատապարտում են մահվան: Նախքան սպանությունը Գրիգորի առջև հավատուրացության խնդիր է դրվում, ինչը, բնականաբար, հերոսականորեն մերժվում է: Վկայի մարմնի վրա լույս է իջնում, որը տեսնում են շատ մարդիկ:

Տարբերությունն այս դեպքում այն է, որ սյուժեն ենթարկված է զրույցի ժանրին բնորոշ նպատակասլացության ու կարճառոտության թելադրանքին: Այնպիսի մանրամասնություններ, ինչպիսիք են, օրինակ, դատարանային մասի երկխոսությունները, հասցված են նվազագույնի:

Վկայաբանությունների ավարտուն և ամբողջական դրսևորումների հետ մեկտեղ Դավրիժեցու պատմագրքում հաճախ են հանդիպում բարոյաբանական բնույթի հատվածներ, դատողություններ, գնահատականներ, որոնք, անշուշտ, թելադրված են վկայաբանական գրականության ոգուց ու ոճից: Այդպես՝ պատմելով այն մասին, թե ինչպես էին պարսիկները անխնա կոտորում հայ բնակիչներին, Դավրիժեցին իրենց կամավոր կերպով անսահման բարձրությունից վայր նետող աղջիկների արարքը բացատրում-պատճառաբանում է հետևյալ կերպ՝ «...վասն որոյ լաւ համարեալ զսրբութեամբ մահն իւրեանց քան զապրուստ սուղ ինչ ժամանակեայ կենաց, որ այն ևս մեղօք և չարակրութեամբ...» (էջ 86):